

ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՄԻՆԵ ՄԵԻԹԱՐՅԱՆ

*ՀՊՏՀ քիզմեսի կազմակերպման
ամբիոնի ասիստենտ*

ԹԵՂՈՒՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Մարդն իր գոյության ընթացքում, որպես բնության մի մասնիկ, հարմարվել է շրջակա միջավայրին և ժամանակի ընթացքում ձգտել առավելագույնս օգտվել բնության բարիքներից: Իբրև բանական էակ՝ նա կարողացել է ընկալել բնական երևույթները և դրանք օգտագործել կյանքի պայմանները բարելավելու համար: Քանի դեռ չէր ձևավորվել այս հզոր ինդուստրիալ աշխարհը, «բնություն-մարդ» փոխազդեցության մեջ շրջակա միջավայրը թելադրող կողմ էր:

Տնտեսության զարգացմանը զուգընթաց մեծացավ մարդկանց ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, և արդյունաբերական հեղաշրջումը շրջադարձային եղավ «բնություն-մարդ» հարաբերություններում: Արդյունաբերությունը դարձավ համաշխարհային տնտեսության և նյութական ոլորտի ամենակարևոր ճյուղը:

Սկսեցին զարգանալ արդյունաբերության այնպիսի ճյուղեր, որոնք հիմնված էին միայն բնական ռեսուրսների և պաշարների արդյունահանման և օգտագործման վրա: Բայց ռեսուրսների սահմանափակությունը, բնության դանդաղ վերարտադրական հնարավորությունները, բնակչության արագ աճը մարդկությանը կանգնեցրին բնապահպանական հիմնահարցերի առջև՝ հանգեցնելով էկոլոգիական ճգնաժամի:

«Էկոլոգիական ճգնաժամ» հասկացությունը հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն բացահայտելու էկոլոգիական հիմնահարցերի էությունը՝ ելնելով այն դրույթից, որ մարդը, որպես բնական էակ, ողջ էկոհամակարգի անբաժանելի մասն է, իսկ բնական և սոցիալական երևույթները միասնական են: «Էկոլոգիական ճգնաժամը», առավել պարզ սահմանմամբ, դիտվում է որպես բնական պայմանների և մարդու՝ շրջակա բնական միջավայրի վրա ազդեցության միջև հավասարակշռության խախտում¹:

Ըստ էության, դա նշանակում է շրջակա միջավայրի բնական և հասարակական բաղադրատարրերի միասնության խախտում, որը սպառնում է մարդու, հասարակության և կենսոլորտի հավասարակշռությանը:

¹ Տե՛ս **Валова В.**, Основы экологии /Оч. і особие/. М., Издательский дом „Дошков и К“, 2001:

Անկախ դրսևորման ձևերից՝ շրջակա միջավայրի ներկա վիճակի գնահատումները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ էկոլոգիական հավասարակշռության խախտումը և էկոլոգիական ճգնաժամները նախևառաջ ժամանակակից արդյունաբերական զարգացման հետևանք են, որն առաջացնում է սոցիալական, բնապահպանական խնդիրներ:

Այսպես՝ մեծ չափերի են հասել մթնոլորտային օդի աղտոտումը, քաղցրահամ ջրերի պաշարների հյուծումը և համաշխարհային օվկիանոսի աղտոտումը, անտառահատումները, հողերի դեգրադացիան և այլն: Եվ չնայած մշակվել են մի շարք տեսություններ, օրենքներ, մեխանիզմներ, միևնույն է, դեռևս շատ անելիքներ կան այս ոլորտում. այսօր էլ գործարար կյանքի զարգացումը շարունակում է բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

Նշված հիմնախնդիրներին անդրադառնալով Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի օրինակով: Ներկայացնենք հանքավայրի շահագործման հետևանքով բնության և մարդկային գործոնի վրա վտանգավոր ազդեցություններն ու դրանք նվազագույնի հասցնելու հնարավորությունները:

ՀՀ բնապահպանության նախարարությունը, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը հաստատող հանձնաժողովի որոշմամբ, «Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի և պղնձամոլիբդենային հանքավայրի առաջին հերթի (8 տարի) շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ տվել է դրական եզրակացություն՝ որոշակի պահանջների պարտադիր կատարման պայմանով, որոնք ներառում են մի շարք կարգավորող միջոցառումներ:

Հողի բերրի շերտի հեռացումը հանգեցնում է հետևյալ վտանգների՝ հումուսով հարուստ (50 սմ հզորությամբ) հողի շերտի կորուստ, հողերի էրոզիա: Հետևանքները մեղմացնելու նպատակով կատարվելու է հետևյալ միջոցառումը՝ հողի բերրի շերտի հանում և պահպանում հատուկ առանձնացված վայրում ռելիեֆի վացիայի և/կամ տնկանյութի բազայի համար: Նախատեսվում է նաև բերրի հողաշերտը տեղափոխել այլ վայրեր և, 3 մ բլրի տեսք տալով, թիթեռնաձաղկավորների ու հացազգի խոտախառնուրդի ցանքի միջոցով ճիմ առաջացնել՝ բարձրացնելով հողի հակաէրոզիոն հատկությունները:

Կոմբինատի սպասարկման ճանապարհների անցկացումը հանգեցնում է հետևյալ վտանգների՝ սարքավորման արտանետումներ, փոշու կուտակում, ծառահատումներ, հողերի քայքայում: Այս ամենը կանխարգելելու համար անհրաժեշտ են սարքավորման տեխնիկական վիճակի նախնական և պարբերական ստուգումներ, գտիչների տեղադրում արտանետման խողովակների վրա, երիտասարդ և վերատնկման համար պիտանի ծառերի տեղահանում ճանապարհների համար նախատեսված տարածքներում (արմատով ու բուսահողով), ծառատունկ ճանապարհների եզրերին, տնկանյութի բազայի հիմնում կամ եղածների՝ կարիքների համար օգտագործում, թեք լանջերի դարավանդում և անտառմելիորատիվ աշխատանքների կատարում:

Շինարարական հումքի և նյութերի տեղափոխումը, բեռնաթափումը հանգեցնում են հետևյալ վտանգների՝ շրջակա միջավայրի աղտոտում շինանյութերով, օդի աղտոտում անօրգանական փոշիով: Նշված վտանգները մեղմացնելու համար անհրաժեշտ է աշխատողների վերահսկողություն, ջրցողում բեռնաթափման ժամանակ, տեղային կառույցների շինհրապարակների ցանկապատում պոլիէթիլենի թաղանթով:

Հողի բերրի շերտի հեռացումն ու շինարարական հրապարակի նախապատրաստումը պատճառ են դառնում հետևյալ վնասների՝ հումուսով հարուստ բուսահողի շերտի կորուստ, անտառահատումներ, անտառային կենսաբազմազանության վերացում, հողերի էրոզիա: Համապատասխան միջոցառումներն ընդգրկում են՝ բուսահողի տեղափոխում տնկանյութի բազա կամ հատուկ առանձնացված վայրեր, երիտասարդ և վերատնկման համար պիտանի ծառերի տեղափոխում արմատով ու բուսահողով՝ բացահանքից և հարակից տարածքից, լցակույտերի համար նախատեսված, պոչամբարի տակ հատկացված տարածքներից: Իրականացվում են նաև մատղաշի պահպանում տնկանյութի բազայում և/կամ ծառատունկ թեք լանջերի վրա, սանիտարական գոտու լրացում և ընդլայնում:

Սանիտարական գոտու ռոռզման հետևանքով կոմբինատի շինարարության և աշխատանքի ընթացքում տեղի է ունենում հանքաքարի փոշու նստեցում սանիտարական գոտու սաղարթին: Այս վնասի մեղմացման համար սանիտարական գոտու ռոռզումն իրականացվում է ջրցան մեքենաներով:

Շինանյութերի բեռնաթափումը հանգեցնում է շրջակա միջավայրում փոշու տարածման: Շրջակա միջավայրի փաստացի աղտոտումը նվազեցնելու նպատակով կատարվում են խճի, ավազի խոնավացում և փոշու նստեցում:

Հողի փորումը և շինարարական աշխատանքները հանգեցնում են հետևյալ վնասների՝ ծխազագեղի արտանետում բուլղոգերի և էքսկավատորի աշխատելու ընթացքում, կոմբինատի կառույցներին հարակից տարածքների աղտոտում շինանյութերով, փոշու տարածում, պատմության և մշակույթի հուշարձանների խաթարում: Այս ամենը կանխելու համար անհրաժեշտ են սարքավորումների տեխնիկական վիճակի պարբերական ստուգումներ, գտիչների տեղադրում մեքենաների ծխափողերի վրա (եթե դրանց գործարանային պարամետրերը տալիս են մման հնարավորություն), աշխատողների հսկողություն: Բացի վերը թվարկվածներից, կատարվում են նաև խճի, ավազի ջրցանում, փոշու նստեցում ջրցան մեքենաներով, իրականացվում են պատմության ու մշակույթի հուշարձանների պահպանության միջոցառումներ:

Ավտոամբարձիչների աշխատանքի հետևանքով տեղի են ունենում արտանետումներ. դրանց պատճառը շարժիչների անկանոն աշխատանքն է, որը կանխելու համար անհրաժեշտ են մեքենաների տեխնիկական վիճակի նախնական և պարբերական ստուգումներ:

Մալուխի, խողովակաշարի անցկացումն իր հերթին հանգեցնում է հետևյալ վնասների՝ տարածքի ոչ արդյունավետ օգտագործում, հողի աղտոտում ռետինե և մետաղական իրերի մնացորդներով: Այս դեպքում կի-

րառվում են արդեն իսկ մշակված նախագծեր՝ հաշվի առնելով հողօգտագործման օպտիմալ տարբերակները: Մետաղի ջարդոնը և ռետինե մնացորդները հավաքվում են հատուկ առանձնացված հարթակներում:

Բացահանքի շահագործման ժամանակ առաջանում են որոշակի խնդիրներ: Այսպես՝

Հորատում. փոշի, աղմուկ, ուստի նախատեսվում է կիրառել СБШ-250 հորատող հաստոցներ, որոնք սարքավորված են փոշեռսիչներով:

Պայթեցումներ. որպես հետևանք առաջանում են փոշու և գազերի համազարկային արտանետումներ, աղմուկ, փոշու նստվածք հողի մակերևույթին և ծառերի սաղարթին: Անհրաժեշտ են հետևյալ միջոցառումները՝ պայթեցված զանգվածի ոռոգում, ջրցան մեքենաներով բացահանքի շրջակայքի ոռոգում չոր և հողմոտ եղանակին, սանիտարական գոտու ջրցանում մեքենաներով:

Մակաբացում. վառելիքի հոսակորուստներ, արտանետումներ ծանր տեխնիկայի աշխատանքի հետևանքով: Կանխարգելման նպատակով կատարվում են սարքավորման տեխնիկական վիճակի ստուգումներ:

Բացահանքի խորանցում մինչև ուրվագծի վերջնական փակվելը. ջրային արտահոսքեր առանց մաքրման, որպես հետևանք նաև՝ աղտոտող նյութերի անցում մակերևութային ջրավազաններ: Անհրաժեշտ միջոցառումներից են ջրերի ինքնահոս տեղափոխումը հարստացուցիչ ֆաբրիկա և օգտագործումը տեխնոլոգիական նպատակներով, ջրահեռացման ջրանցքի կառուցումը:

Մեքենաների լվացում բեռնաթափերի հավաքակայանում. նավթամթերքով աղտոտված ջրային արտահոսքեր: Հարկ է ստեղծել դրենաժային համակարգ՝ արտահոսքերի հավաքման և մաքրման նպատակով, իրականացնել նավթամթերքի որսում, որից հետո մաքրված ջուրն ուղղել շրջանառու համակարգ:

Բացահանքի դատարկ ապարների կուտակում. փոշի, հողային տարածքի ոչ ռացիոնալ օգտագործում: Այս պարագայում պետք է բացահանքի դատարկ ապարներն օգտագործել պոչամբարի առաջնային պատնեշի կառուցման և ճանապարհների շինարարության համար:

Մակաբացման ապարների կուտակում. օբսիդացված հանքաքարի անօրգանական փոշի, ակտիվ իոնների թափանցում գրունտային ջրեր: Վնասները մեղմելու նպատակով անհրաժեշտ է ապարների մակաբացման 60%-ը կատարել մեխանիկական փխրեցումով, որը զգալի նվազեցնում է փոշու տարածումը: Մակաբացման ապարները տեղավորվում են հատուկ լցակույտերում՝ բուլդոզերային եղանակով ստեղծված, կողի թեքման անկյունը՝ 45°:

Փիրուզակիր ապարների առկայություն մակաբացման ապարներում. թանկարժեք բնական քարի կորուստ: Ուստի փիրուզի ապարների կուտակումն անհրաժեշտ է կատարել առանձին, իսկ դրա արդյունահանման նպատակով ընկերությունը պետք է կազմի հանքարդյունահանման ծրագիր:

Հանքաքարի խոշոր ջարդում կոնավոր ջարդիչում. անօրգանական փոշի, աղմուկ: Պետք է օգտագործել ասպիրացիոն երկու համակարգ՝

սարքավորված IBM-5CA, БЦП 7-40-5-06 թաց փոշեռսիչներով: Անձնակազմին անհրաժեշտ է տրամադրել հատուկ արտահագուստ, շնչադիմակներ, ականջակալներ:

Ջարդած հանքաքարի պահեստավորում. փոշու տարածում: Հարկ է տեղադրել ասպիրացիոն համակարգ՝ սարքավորված թաց փոշեռսիչներով:

Ռեագենտների պատրաստման արտադրամասի գործունեության հետևանքով առաջանում է կրի փոշու, Na_2S -ի փոշու, քսան թագենատի գոլորշու տարածում շրջակա միջավայրում: Նախատեսվում է փոշու մաքրում СПГ-2, СПГ-4 ճկափողային զտիչներով:

Ֆաբրիկայի գործունեության հետևանքով տեղի են ունենում հոսակորուստներ, վթարային արտահոսքեր ֆաբրիկայի տարբեր արտադրամասերից: Անհրաժեշտ է յուրաքանչյուր արտադրամասի համար ստեղծել ինքնավար դրենաժային համակարգ առանձին հոսակորուստները, վթարային արտահոսքերը, վերաթափումները հավաքելու և տեխնոլոգիական գործընթացում կրկնակի օգտագործելու նպատակով:

Չեռնարկության արտադրական հրապարակում և բանավանում առաջանում են կենցաղային կեղտաջրեր, անձրևաջրեր և ձնհալ: Նախատեսվում է կառուցել կենսաբանական մաքրման կայան՝ $400 \text{ մ}^3/\text{օր}$ հզորությամբ, որից հետո հոսքաջրերը արտաթողել Շնող գետ՝ գյուղից ներքև: Պլանավորվել է նաև կառուցել հեղեղատար կոյուղի, որի դրենաժային համակարգով անձրևի և ձնհալի ջրերը հավաքվում են և ինքնահոս ուղղվում պոչատար:

Տրանսպորտի և ծանր տեխնիկայի աշխատանքի հետևանքով առաջանում են ծխագազերի արտանետումներ: Անհրաժեշտ է զտիչների տեղադրում մեքենաների, բուլդոզերների և էքսկավատորների արտանետման խողովակների վրա (եթե դրանց մեքենաների գործարանային պարամետրերը ընձեռում են նման հնարավորություն):

Ընդհանուր տարածքում կարող են առաջանալ հողերի էրոզիա, փոշի, հրդեհ: Բացասական հետևանքների ազդեցությունը մեղմելու նպատակով անհրաժեշտ է պահպանել, ընդլայնել ծառածածկը՝ ստեղծելով սանիտարական գոտի: Նախատեսվում է կառուցել հետադարձ թեքության դարավանդներ և իրականացնել անտառմելիորատիվ միջոցառումներ, տարածքի և ճանապարհների ոռոգում ջրցան մեքենայով՝ չոր եղանակի ժամանակ, ինչպես նաև ստեղծել հակահրդեհային համակարգ:

Պոչերի՝ ամբար տեղափոխման ընթացքում առաջանում է հողի աղտոտում խողովակների խզումից և պոչատարի վթարներից: Ուստի, հաշվի առնելով տեղանքի ռելիեֆը, ֆաբրիկայի և պոչամբարի նիշերի տարբերությունը՝ նախատեսվում է պոչերի տեղափոխումն իրականացնել ինքնահոս՝ սալերով երեսպատված բետոնե բաքերով: Ծնշումայինի համեմատությամբ դա ավելի անվտանգ է:

Պոչերի ամբարումը կարող է հանգեցնել սեյսմիկ վտանգի, մակերևութային և գրունտային ջրերի աղտոտման, պոչամբարի պատնեշից փոշիացման: Հարստացուցիչ ֆաբրիկայի պոչերի տեղադրման տարածքի ընտրությունը կատարվել է մի քանի տարբերակներից: Պոչամբարն ունի

կրկնակի պատմե՛շ՝ առաջնային և պաշտպանիչ: Դրանց միջև ընկած տարածքում հավաքվում է առաջին՝ հիմնական պատմե՛շից ներծծվող քամուկը (ֆիլտրատ) և վերադարձվում շրջանառու համակարգ: Պատմե՛շի բարձրացմանը համընթաց կատարվում է ռեկուլտիվացիա: Պաշտպանիչ պատմե՛շը և դրանով ստեղծված մակերեսը մեկուսացվում են կավի շերտով՝ բացառելով ստորգետնյա ջրերի աղտոտումը:

Ջրահեռացման ժամանակ գետի ջրերն աղտոտվում են: Նախատեսվում է պոչամբարի տակ՝ գետի հունով կառուցել ջրահեռացման կոլեկտոր՝ մետաղական խողովակից, երկաթբետոնե պատյանի մեջ: Կճևավորվե՛ն մաս 20 մ բարձրությամբ երկաթբետոնե ջրընդունիչ հորեր, որոնք պոչամբարի լցվելու դեպքում կփակվե՛ն՝ երկարությամբ ստեղծելով շրջանառու համակարգ:

Ինքնահոս պոչատարը կարող է պատճառ դառնալ շրջակա միջավայրի աղտոտման՝ վթարի հետևանքով: Ինքնահոս պոչատարը կազմված է 2 գծից, որոնցից մեկն աշխատող է, մյուսը՝ պահուստային: Պոչատարի միակողմանի թեքության շնորհիվ բացառվում են վթարային արտահոսքերը շրջակա միջավայր: Պոչամբարը վթարային ավազանի դեր է կատարում:

Սակավաջուր գետի ջրերի հեռացման ժամանակ մակերևութային ջրերն աղտոտվում են: Նախատեսվում է բետոնե պատվարի ստեղծում պոչամբարի վերնամասում՝ 2 հիմնական վտակների հատման կետում և բետոնով ու երկաթբետոնով երեսպատված ջրհեռ ջրանցքի կառուցում գետի ձախ լանջով, որն իր ճանապարհին կընդունի բոլոր ձախափնյա վտակների ջրերը և, անցնելով պոչամբարի ամբողջ երկայնքով, կավարտվի պոչամբարից ներքև՝ Շնողի հովտում:

Նավթամթերքի, պայթուցիկ և թունավոր նյութերի պահեստները կարող են ստեղծել մի շարք խնդիրներ:

Վառելիքի, նավթամթերքի տեղափոխման և պահեստավորման ժամանակ առաջանում են հոսակորուստներ՝ պատճառ դառնալով ստորգետնյա ջրերի աղտոտման: Ուստի նավթամթերքի պահեստները տեղակայվում են Ախթալա կայարանում՝ բետոնապատ հրապարակների վրա, որոնք ունեն հոսակորուստների հավաքման դրենաժային համակարգ: Այդ համակարգի առկայությունը բացառում է նավթամթերքի անցումը ստորգետնյա ջրեր:

Ծանր տեխնիկայի, ավտոմեքենաների, պոմպերի, դիզելային վառելիքի, քսայուղերի, նավթի որսման թափվածքի կուտակման ընթացքում, որպես հետևանք, թափոնների տարածում է նկատվում շրջակա միջավայրում: Ուստի օգտագործված յուղերը հավաքվում են անթափանց տակառներում և տեղափոխվում նավթամթերքի պահեստ, որտեղ պահվում են առանձնացված հարթակում: Այստեղից դրանք պարբերաբար ուղարկվում են նավթավերամշակման կամ իրացվում են՝ այլ նպատակներով օգտագործման համար:

Ավտոմեքենաների հավաքակայանների գործունեության հետևանքով հոսքաջրերը լցվում են շրջակա միջավայր, ուստի առաջացած կեղտաջրերը պետք է ուղղվեն պոչատար և լցվեն պոչամբար:

Կենսաբանական մաքրման կայանի գործունեությունից առաջանում է ջրազրկված նստվածք քիմիական տարրերի պարունակությամբ: Բացասական հետևանքի ազդեցությունը մեղմելու համար մաքրման կայանից հարկ է հեռացնել նստվածքի 70%-ը, մյուս մասն օգտագործել որպես մեղման: Ջրազրկված նստվածքն անհրաժեշտ է տեղափոխել պոչամբար, կամ օգտագործել որպես պարարտանյութ, կամ պահեստավորել առանձին վայրում:

Վարչական աշխատանքը սպասարկելիս առաջանում են կենցաղային թափոններ (թուղթ, ստվարաթուղթ, ապակի, պլաստմասսա և այլն): Նախատեսվում է դրանք տեղափոխել հատուկ տարածքներ, որոնց տեղադիրքը որոշվում է բնապահպանական և տարածքային կառավարման մարմինների համաձայնությամբ:

Բացահանքի առկայության պայմաններում վտանգ է ներկայացնում ջրերի կուտակումը դրա հատակին: Նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝ շարժական սարքավորումների հեռացում և դրենաժի վերականգնում, թեքությունների ամրապնդում, ցանկապատում, սպասարկման ճանապարհների քանդում, առափի վերականգնում հատակում կուտակված ջրերի վրա: Անհրաժեշտության դեպքում նախատեսվում է նաև բացահանքի ջրերի մաքրում:

Թափոնակույտերը վերացնելու համար հարկ է մինչև 20° թեքություններ ձևավորել, դրենաժային համակարգ տեղադրել թեքությունների հատակին, մակերևութային դրենաժ կատարել, նաև տեղանքին հարմար ամրացնող բույսեր տնկել:

Թափոնները, ռեազենտների, քիմիկատների մնացորդները աղտոտում են շրջակա միջավայրը: Անհրաժեշտ է տարածքն ազատել թափոններից, ռեազենտների, քիմիկատների մնացորդներից, շինարարական աղբից: Թունավոր թափոնները, հողի վարակված շերտը տեղափոխում են պոչամբար և թաղում:

Շենքերի, շինությունների կառուցման հետևանքով առաջացող վնասները մեղմելու համար նախատեսվում է սարքավորումները, շենքերը, շինությունները, խողովակները կազմաքանդել, հիմքերը հավասարեցնել հողին, տարածքը ձևավորել, հողը փխրեցնել և տարբեր բույսեր տնկել: Իրականացվում է նաև տարածքի նախնական տեսքի վերականգնում, իսկ հողի աղտոտվածության բարձր մակարդակի դեպքում կատարվում են լրացուցիչ աշխատանքներ: Կանխարգելիչ միջոցառումներից են պոչամբարի մակերևութի նախապատրաստումն ու բույսերի տնկումը, ռելիուլիվացիան, ավելորդ ջրերի հեռացումը, մակերևութային, գրունտային ջրերի, հողի որակի մշտադիտարկումը: Անհրաժեշտության դեպքում իրականացվում է մակերեսի կրկնություն, հողի բարձր աղտոտվածության դեպքում՝ հողաշերտի լրացուցիչ մշակում: Վաճառքի պարագայում անհրաժեշտ է պահպանել շենքերը, մաքրման կայանը, ենթակառույցները, մաքրել տարածքը և ընդհանուր տարածքում վերականգնել բնական դրենաժը: Հարկ է նաև քանդել կոմբինատը սպասարկող ճանապարհները, տարածքը մաքրել, վարել՝ ստեղծելով նախկին լանդշաֆտի վերականգնման պայմաններ: Ջարդոնից, թափոններից տարածքը մաքրելուց և վնասագերծելուց հետո

կարելի է շենքերը և շինությունները վաճառել կամ տալ վարձակալության, եթե նոր գործունեությունը չի հակասի սանիտարական և բնապահպանական նորմերին: Հողերի էրոզիան կանխելու նպատակով նախատեսվում է կատարել աստիճանավոր դարավանդում բացահանքի հարստացուցիչ ֆաբրիկայի, ճանապարհների եզրերին: Դա կանխում է հողատարումը, նպաստում ջրաջերմային ռեժիմի կարգավորմանն ու բուսականության լավ աճին: Դարավանդներում կատարվում են անտառմելիորատիվ աշխատանքներ հողերի արմատական բարելավման և արտադրողականության բարձրացման նպատակով:

Լեռնային անտառների վրա ծառահատումների պատճառով առաջացող բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար նախատեսվում է բացատային վայրերից հանված հողի բերրի շերտն ամբարել հատուկ առանձնացված վայրում՝ որպես տնկանյութի բազա, իսկ երիտասարդ և վերատնկման համար պիտանի ծառերը, առանց հատելու, արմատով ու բուսահողով տեղափոխել տնկարան և/կամ ծառատունկ անել ճանապարհների եզրերին, թեքությունների վրա՝ հողի քայքայումը կանխելու նպատակով: Տեղահանման և անտառվերականգնման աշխատանքներն իրականացվում են նաև խախտման ենթակա տարածքների բնական վերաճի միջոցով:

Վնասակար ազդեցությունը մթնոլորտային օդի վրա նվազեցնելու համար օգտագործվում են օդազտիչներ, իսկ ջրցան մեքենաների միջոցով օրվա տարբեր ժամերի նվազեցվում է փոշու տարածումը տարածքում:

Ջրային ավազանի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու ուղղությամբ ստեղծվում է դրենաժային համակարգ՝ արտահոսքերի հավաքման ու մաքրման համար, որպեսզի ջրերն ինքնահոս տեղափոխվեն հարստացուցիչ ֆաբրիկա և օգտագործվեն տեխնոլոգիական նպատակներով, կառուցվում է ջրահեռացման ջրանցք: Խմելու և տնտեսական նպատակներով ջրամատակարարումն իրականացվում է Շնող գետի վերին հոսանքից, որտեղ նախատեսվում է ստեղծել ջրառի կառույց և մաքրման կայան: Ձուրը հասցվում է մաքրման կայան 100 մ տրամագծով պողպատե խողովակներով (400 մ^3 օր), որտեղից բնակելի շինություններին մատակարարվում է ինքնահոս, իսկ բացահանքի և հարստացուցիչ ֆաբրիկայի կառույցներին՝ պոմպով: Նախատեսվում է ջրառի կառույցները և մաքրման կայանը շրջափակել սանիտարական պաշտպանիչ գոտու ծառաշերտով:

Թեղուտի հանքավայրի օրինակը ցույց է տալիս, թե հասարակությունն ինչպիսի բնապահպանական բարդ խնդիրների առջև է կանգնած. խնդիրներ, որոնք մինչ այժմ չէին հանդիպել կամ մեծ սրությամբ չէին ծառացել: Հետևաբար՝ նախքան հանքավայրի շահագործումը հասարակությունը պետք է հստակ տեղյակ լինի վնասներին և օգուտներին:

Բնությունը կենդանի և զգայուն օրգանիզմ է, որին պետք է չափազանց զգույշ վերաբերվել, առավել ևս Հայաստանում, որտեղ չկա հանքարդյունաբերության շահագործման հայեցակարգ: Երկրի ընդերքի շահագործման իրավունքն ու պատասխանատվությունը պետք է պետության բացառիկ մենաշնորհը լինեն:

Թեև կազմակերպությունը մշակել է վերոնշյալ միջոցառումները, որոնց իրականացումը մասամբ կնվազեցնի տեղանքին հասցվող վնասների չափերը, բայց արդյո՞ք լիովին կկատարվեն այդ պարտավորությունները: Դրանք վերահսկվելու են Հայաստանի բնապահպանական պետական տեսչության «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի, Հայաստանի փրկարար ծառայության, մարզպետարանի բնապահպանական պետական տեսչության կողմից: Կարծում ենք՝ հասարակության ներգրավումը ևս կտա ցանկալի արդյունք: Վստահ ենք նաև՝ շահագործող ընկերության շահերից է բխում պայմանագրային պարտավորությունների բարեխիղճ կատարումը:

ЛУСИНЕ МХИТАРЯН

Ассистент кафедры

„Организации бизнеса” АГЭУ

Система природоохранительных мероприятий эксплуатации Тегутского месторождения.- Из анализа становится очевидно, что с точки зрения защиты природы налицо почти все опасные явления. В конечном итоге горная промышленность наносит большой вред окружающей среде. Во время эксплуатации рудников противодействуют следующие силы:

1. эксплуатирующая организация, которая стремится получить максимальную прибыль, при малых вложениях
2. государство, стремящееся получить больше платежей
3. общество, единственной заботой которого является защита природы для себя и своих потомков.

Первые две силы возможно пойдут на взаимные уступки в ущерб защите природы. Значит, роль общества должна быть более сильной и решительной.

LUSINE MKHITARYAN

Assistent at the Chair

of „Organization of Business” at ASUE

The System of Environmental Protection Measures of Exploitation of Tegout Deposit.- The analysis carried out shows that almost all the ecologically harmful phenomena exist there. After all mining industry causes big damage to the environment. The following contradicting factors are present during the exploitation of the deposit:

1. The company performing exploitation which aims at getting maximum profit with the minimum possible investment.
2. The state which aims at getting maximum amount of fees.
3. The society which is purely concerned with the nature protection issues for themselves as well as for the next generations.

The first two groups can come to some compromise with a harmful effect for the nature protection. So the role of the society should be stronger and firmer on this issue.